ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «27» 07 2021թ N 542 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N 168-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի № 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 41.1-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի մարտի 5-ի «Էքսպերտ Սերվիս» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին»» N 168-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումը.

1) Հրամանի 1-ին կետում «N 019/S-024, N 004/B-005 (N1-A հավելված) և N 019/S-024 (N 1-B հավելված))» բառերը փոխարինել «№ 019/S-039)» բառերով:

2) Հրամանի 2-րդ կետում «մինչև հավատարմագրման տեխնիկական կոմիտեի կողմից հետագա հավատարմագրման կամ հավատարմագրման մերժման մասին համապատասխան որոշման ընդունումը» բառերը փոխարինել «2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2025 թվականի հուլիսի 1-ը» բառերով,

3) Հրամանի 2-րդ կետը լրացնել նոր 2.1 կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«2.1 «Էքսպերտ Սերվիս» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին տրամադրված համապատասխանության գնահատման մարմնի N Ն-23 նշանակման վկայականը վերաձևակերպել համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ № 019/S-039):»:

2. Սույն հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված փոփոխությունները գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի № 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում իրազեկման հաջորդող օրվանից և տարածվում է 2021 թվականի հուլիսի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

4" Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Տերյանին:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124